**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՍԱՆՀԻԳԻԵՆԻԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N ՀՀ-ԼՄՍՀ-ՄԱԱՊՁԲ-25/01**

ք. Ստեփանավան «20» փետրվարի 2025թ.

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկը, ի դեմս համայնքի ղեկավար Արմեն Գրիգորյանի, որը գործում է համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Ա/Ձ Արարատ Դոխոյանն, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին :

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և քասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Չննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **947070 (Ինը հարյուր քառասունյոթ հազար յոթանասուն) ՀՀ դրամ**: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական

համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում[17.1]:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության:

Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ | Ա/Ձ Արարատ Դոխոյան |
| հ.Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/2/ 1 | ք.Ստեփանավան, Վիրահայոց 80/11 |
| ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | «Արդշինբանկ» ՓԲԸ Ստեփանավանի մ/ճ |
| հ/հ 900252131025 | հ/հ2471403035270000 |
| ՀՎՀՀ 06954104 | ՀՎՀՀ 67033518 |
| ------------------------------ | ------------------------------ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| | Կ.Տ |

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը ** | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | Մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը*** |
| 1 | 33711480 | Օճառ ձեռքի | | Չորսուների, կտորների և այլ ձևերով, որակական թիվը (ճարպաթթուների զանգվածը վերահաշվարկված 100 գ կտորի անվանական զանգվածի համար) ոչ պակաս՝ «Զեզոք» և «Էքստրա» տեսակների համար 78 գ, «Մանկական» և «Սովորական» տեսակների համար 74 գ, սոդայանյութերի զանգվածային (վերահաշվարկված ըստ Na2O) մասը ոչ ավելի՝ «Զեզոք» տեսակի համար բացակայում է, «Էքստրա» տեսակի համար՝ 0,2 %, «Մանկական» տեսակի համար՝ 0,15 %, «Սովորական» տեսակի համար՝ 0,22 %, օճառից անջատված ճարպաթթուների պնդեցման ջերմաստիճանը (տիտրը)՝ (36-41) °C, նատրիումի քլորիդի զանգվածային մասը՝ 0,4 %-ից ոչ ավելի, անվտանգությունը՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2005թ. նոյեմբերի 24-ի N 1109-Ն հրամանով հաստատված «N 2-III-8.2 օծանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրությանը և անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» սանիտարական կանոնների և նորմերի, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ԳՕՍՏ 28546-2002 | հատ | 150 | 27000 | 180 | ք.Ստեփանավան,Սոս Սարգսյանի 1 | 180 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2025թ. դեկտեմբերի 30-ը |
| 2 | 39836000 | Ավել | | Սենյակի հատակը մաքրելու համար, բնական, տեղական արտադրության, քաշը չոր վիճակում (350-500) գրամ, երկարությունը (85-90) սմ, ավլող մասի լայնքը (35-40) սմ | հատ | 1300 | 26000 | 20 | ք.Ստեփանավան,Սոս Սարգսյանի 1 | 20 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2025թ. դեկտեմբերի 30-ը |
| 3 | 33761000 | Զուգարանի թուղթ ռուլոնով | | Երկշերտ կամ եռաշերտ, 9,8սմX12,5սմ, 150 թերթիկ, երկ. 18,75մ, պատրաստված գրելու թղթից, լրագրաթղթից և այլ թղթերի թափոններից, թուլլատրված սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքներ պատրաստելու համար: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված "Կենցաղային և սանիտարա-հի-գի-ենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող | հատ | 180 | 144000 | 800 | ք.Ստեփանավան,Սոս Սարգսյանի 1 | 800 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2025թ. դեկտեմբերի 30-ը |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | պահանջների տեխնիկական կանոնակարգի": | | | | | | | |
| 4 | 33761100 | Զուգարանի թուղթ | | Երկշերտ կամ եռաշերտ, պատրաստված գրելու թղթից, լրագրաթղթից և այլ թղթերի թափոններից, թույլատրված սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքներ պատրաստելու համար: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված "Կենցաղային և սանիտարա¬հի¬գի¬ենիկ նշանակության թղթե և քիմիական թելերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի": | հատ | 200 | 16000 | 80 | ք.Ստեփան ավան,Սոս Սարգսյանի 1 | 80 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2025թ. դեկտեմբերի 30-ը |
| 5 | 39812600 | Աղտահանող միջոց | | Զուգարանակոնքի լվացող և մաքրման միջոց, հեռացնում է ժանգը և նստվածքը, հանդիսանում է մանրէասպան և ախտահանիչ միջոց՝ սպիտակի կամ կանաչի, կապույտի կամ այլ գույների բաց երանգներով, օգտագործված հոտավորիչի հոտով, 1%-անոց ջրային լուծույթի pH-ը՝ 2-7, ջրում չլուծվող մնացորդի զանգվածային մասը՝ 70%-ից ոչ պակաս, խոնավությունը՝ 2%-ից ոչ ավելի, մաքրող հատկությունը՝ 85%-ից ոչ պակաս, պետք է լինեն ոչ թունավոր և հրակայուն, փաթեթավորված՝ 750 մլ պոլիմերային կամ այլ տարաներում, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված "Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի": | հատ | 750 | 45000 | 60 | ք.Ստեփան ավան,Սոս Սարգսյանի 1 | 60 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2025թ. դեկտեմբերի 30-ը |
| 6 | 39812600 | Մաքրող միջոց Raxsha | | Մաքրող միջոց, ախտահանող, ժանգը հեռացնող «Ռախշա», 500 գրամ կամ համարժեք: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի» համաձայն | հատ | 250 | 17500 | 70 | ք.Ստեփան ավան,Սոս Սարգսյանի 1 | 70 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2025թ. դեկտեմբերի 30-ը |
| 7 | 39513200 | Սեղանի թղթե անձեռոցիկ երկշերտ | | Անձեռոցիկ սեղանի՝ երկշերտ, տարբեր չափերի, թղթի 1 մ2 մակերեսի զանգվածը՝ 20 գ, խոնավությունը՝ 7,0 %, 100 հատանոց տուփերով, փափուկ թղթից: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված "Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի": | հատ | 150 | 90000 | 600 | ք.Ստեփան ավան,Սոս Սարգսյանի 1 | 600 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2025թ. դեկտեմբերի 30-ը |
| 8 | 39513200 | Սեղանի թղթե անձեռոցիկ երկշերտ | | Անձեռոցիկ սեղանի՝ երկշերտ, տարբեր չափերի, թղթի 1 մ2 մակերեսի զանգվածը՝ 20 գ, խոնավությունը՝ 7,0 %, 100 հատանոց տուփերով, փափուկ թղթից: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված | հատ | 350 | 42000 | 120 | ք.Ստեփան ավան,Սոս Սարգսյանի 1 | 120 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2025թ. դեկտեմբերի 30-ը |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | "Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի": | | | | | | | |
| 9 | 19641000 | Պոլիէթիլենային տոպրակներ,պարկ աղբի համ | | Աղբի պոլիէթիլենային տոպրակներ, սև կամ գունավոր, աղբը հավաքելու համար` ըստ ԳՕՍՏ 10354-82 կամ համարժեք | հատ | 250 | 32500 | 130 | ք.Ստեփան ավան,Սոս Սարգսյանի 1 | 130 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2025թ. դեկտեմբերի 30-ը |
| 10 | 39835000 | Հատակ մաքրելու ձող | | 1,5-2 մ երկարության փայտե կամ պլաստմասսայե, լաքապատված: | հատ | 1600 | 35200 | 22 | ք.Ստեփան ավան,Սոս Սարգսյանի 1 | 22 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2025թ. դեկտեմբերի 30-ը |
| 11 | 39835000 | Հատակ մաքրելու ձող դույլով | | Հատակ մաքրելու ձող բամբակյա լաթով, դույլով, պլաստմասսայե, լաքապատված | հատ | 6500 | 65000 | 10 | ք.Ստեփան ավան,Սոս Սարգսյանի 1 | 10 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2025թ. դեկտեմբերի 30-ը |
| 12 | 33711480 | Հեղուկ օճառ | | Ձեռքերը լվանալու համար նախատեսված հեղուկ օճառ 250մլ: | հատ | 450 | 67500 | 150 | ք.Ստեփան ավան,Սոս Սարգսյանի 1 | 150 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2025թ. դեկտեմբերի 30-ը |
| 13 | 39221410 | Ավել գոգաթիակի հետ ձողով | | Պլաստմասսայից, Աղբը հավաքելու համար, ձողով, ավելով ՀՍՏ 124-2007 կամ համարժեք: Տարողունակ գոգաթիակ, 27*23սմ+ավել, 104սմ | հատ | 3000 | 48000 | 16 | ք.Ստեփան ավան,Սոս Սարգսյանի 1 | 16 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2025թ. դեկտեմբերի 30-ը |
| 14 | 39811300 | Հոտազերծիչ/դեզոդոր/ | | Օդի հոտավետ հոտազերծիչ, Փակ սենյակի հոտի թարմացման համար, վակումային բալոնիկով, թարմ ծաղկային բուրմունքով | հատ | 450 | 45000 | 100 | ք.Ստեփան ավան,Սոս Սարգսյանի 1 | 100 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2025թ. դեկտեմբերի 30-ը |
| 15 | 39812410 | Կահույքի փայլեցման միջոց | | Փայլեցնող միջոց փայտյա կահույքի համար, Աերոզոլային փաթեթվածքով կամ հեղուկի տարաներով | հատ | 600 | 18000 | 30 | ք.Ստեփան ավան,Սոս Սարգսյանի 1 | 30 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2025թ. դեկտեմբերի 30-ը |
| 16 | 39221490 | Սպունգ սանիտարահիգենիկ նշանակության | | Սանիտարահիգիենիկ նշանակության, սինթետիկ, խորանարդաձև կամ ուղղանկյուն, (15x20) սմ չափի, հաստությունը` 3 սմ կամ այլ չափերի | հատ | 100 | 4000 | 40 | ք.Ստեփան ավան,Սոս Սարգսյանի 1 | 40 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2025թ. դեկտեմբերի 30-ը |
| 17 | 39831242 | Լվացքի փոշի ձեռքով լվանալու համար | | Սպիտակ կամ բաց դեղնավուն կամ գունավորած հատիկավոր փոշի, փոշու զանգվածային մասը ոչ ավել 5 %, pH-ը` 7,5-11,5, ֆոսֆորաթթվական աղերի զանգվածային մասը ոչ ավելի 22 %, փրփրագոյացման ունակությունը (ցածր փրփրագոյացնող միջոցների համար) ոչ ավել 200 մմ, փրփուրի կայունությունը ոչ ավելի 0,3 միավոր, լվացող ունակությունը ոչ պակաս 85 %, սպիտակեցնող ունակությունը (քիմիական սպիտակեցնող նյութեր պարունակող միջոցների համար) ոչ պակաս 80 %, ԳՕՍՏ 25644-96: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը` ըստ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված "Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի" համաձայն | կգ | 650 | 15600 | 24 | ք.Ստեփան ավան,Սոս Սարգսյանի 1 | 24 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2025թ. դեկտեմբերի 30-ը |
| 18 | 39514100 | Բամբակյա վաֆելանման խավոտ սրբիչներ | | Վաֆլենման կամ խավոտ սրբիչներ,եգիպտական բամբակյա մանվածքից` 70 սմ-ից ոչ պակաս լայնությամբ, 130 սմ երկարությամբ ԳՕՍՏ 11027-80 | հատ | 600 | 48000 | 80 | ք.Ստեփան ավան,Սոս Սարգսյանի 1 | 80 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2025թ. դեկտեմբերի 30-ը |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 19 | 39831283 | Հատակ մաքրելու շոր | | Լաթեր բամբակյա գործվածքից հատակը լվանալու համար, գերմանական արտադրության: | հատ | 800 | 80000 | 100 | ք.Ստեփանավան,Սոս Սարգսյանի 1 | 100 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2025թ. դեկտեմբերի 30-ը |
| 20 | 39812600 | Սպասք լվալու հեղուկ | | Սպասքի հեղուկ լվացող միջոց: Տեխնիկական ցուցանիշները՝ համասեռ հեղուկ, դեղին կամ կանաչ գույնի (ըստ օգտագործվող ներկանյութի)՝ առանց կողմնակի ներկանյութերի: | հատ | 430 | 14620 | 34 | ք.Ստեփանավան,Սոս Սարգսյանի 1 | 34 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2025թ. դեկտեմբերի 30-ը |
| 21 | 33761300 | Թղթյա սրբիչներ | | Եռաշերտ թղթյա սրբիչ,12,6մ երկարությամբ,հատվածի չափը 227մմ*250մմ, պատրաստված 100% ցելյուլոզայից: | հատ | 400 | 16000 | 40 | ք.Ստեփանավան,Սոս Սարգսյանի 1 | 40 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2025թ. դեկտեմբերի 30-ը |
| 22 | 39221480 | Զուգարանի խոզանակ | | Զուգարանակոնքը մաքրելու խոզանակ պլաստմասսայից | հատ | 1200 | 14400 | 12 | ք.Ստեփանավան,Սոս Սարգսյանի 1 | 12 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2025թ. դեկտեմբերի 30-ը |
| 23 | 39522330 | Մաքրող կտորներ | | Վիսկոզե, տնտեսական նպատակների համար,բազմակի օգտագործման, (34 x 38 սմ), տուփի մեջ 3 հատ: | հատ | 100 | 4500 | 45 | ք.Ստեփանավան,Սոս Սարգսյանի 1 | 45 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2025թ. դեկտեմբերի 30-ը |
| 24 | 39831281 | Ապակի մաքրող լաթ | | Վիսկոզե, տնտեսական նպատակների համար,բազմակի օգտագործման, (40 x 40 սմ): | հատ | 450 | 11250 | 25 | ք.Ստեփանավան,Սոս Սարգսյանի 1 | 25 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2025թ. դեկտեմբերի 30-ը |
| 25 | 39812600 | Ապակի մաքրող հեղուկ | | Ապակի լվանալու հեղուկ միջոց: Տեխնիկական ցուցանիշները՝ համասեռ հեղուկ, դեղին կամ կանաչ գույնի (ըստ օգտագործվող ներկանյութի)՝ առանց կողմնակի ներկանյութերի: | հատ | 500 | 20000 | 40 | ք.Ստեփանավան,Սոս Սարգսյանի 1 | 40 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2025թ. դեկտեմբերի 30-ը |
| | | **Ընդամենը** | | | | | **947070** | | | | |

**ԳՆՈՐԴ**

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ
 հ.Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/2/ 1
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
հ/հ 900252131025
ՀՎՀՀ 06954104

-----------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

Ա/Ձ Արարատ Դոխոյան
ք.Ստեփանավան, Վիրահայոց 80/11
«Արդշինբանկ» ՓԲԸ Ստեփանավանի մ/ճ
h/h2471403035270000
ՀՎՀՀ 67033518

-----------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N
« 20» փետրվարի 2025 թ. կնքված
N ՀՀ-ԼՄՍՀ-ՄԱԱՊՁԲ-25/01 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 33711480 | Օճառ ձեռքի | | | 2700 | 5400 | 8100 | 10800 | 13500 | 16200 | 18900 | 21600 | 24300 | 27000 | 27000 |
| 2 | 39836000 | Ավել | | | 2600 | 5200 | 7800 | 10400 | 13000 | 15600 | 18200 | 20800 | 23400 | 26000 | 26000 |
| 3 | 33761000 | Զուգարանի թուղթ ռուլոնով | | | 14400 | 28800 | 43200 | 57600 | 72000 | 86400 | 100800 | 115200 | 129600 | 144000 | 144000 |
| 4 | 33761100 | Զուգարանի թուղթ | | | 1600 | 3200 | 4800 | 6400 | 8000 | 9600 | 11200 | 12800 | 14400 | 16000 | 16000 |
| 5 | 39812600 | Աղտահանող միջոց | | | 4500 | 9000 | 13500 | 18000 | 22500 | 27000 | 31500 | 36000 | 40500 | 45000 | 45000 |
| 6 | 39812600 | Մաքրող միջոց Raxsha | | | 1750 | 3500 | 5250 | 7000 | 8750 | 10500 | 12250 | 14000 | 15750 | 17500 | 17500 |
| 7 | 39513200 | Սեղանի թղթե անձեռոցիկ երկշերտ | | | 9000 | 18000 | 27000 | 36000 | 45000 | 54000 | 63000 | 72000 | 81000 | 90000 | 90000 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | 39513200 | Սեղանի թղթե անձեռոցիկ երկշերտ | | | 4200 | 8400 | 12600 | 16800 | 21000 | 25200 | 29400 | 33600 | 37800 | 42000 | 42000 |
| 9 | 19641000 | Պոլիէթիլենայ ին տոպրակներ, պարկ աղբի համ | | | 3250 | 6500 | 9750 | 13000 | 16250 | 19500 | 22750 | 26000 | 29250 | 32500 | 32500 |
| 10 | 39835000 | Հատակ մաքրելու ձող | | | 6400 | 6400 | 11200 | 16000 | 16000 | 20800 | 25600 | 30400 | 30400 | 35200 | 35200 |
| 11 | 39835000 | Հատակ մաքրելու ձող դույլով | | | 19500 | 19500 | 19500 | 39000 | 39000 | 45500 | 45500 | 65000 | 65000 | 65000 | 65000 |
| 12 | 33711480 | Հեղուկ օճառ | | | 6750 | 13500 | 20250 | 27000 | 33750 | 40500 | 47250 | 54000 | 60750 | 67500 | 67500 |
| 13 | 39221410 | Ավել գոգաթիակի հետ ձողով | | | 9000 | 9000 | 18000 | 18000 | 27000 | 27000 | 36000 | 36000 | 48000 | 48000 | 48000 |
| 14 | 39811300 | Հոտազերծիչ/ դեզոդոր/ | | | 4500 | 9000 | 13500 | 18000 | 22500 | 27000 | 31500 | 36000 | 40500 | 45000 | 45000 |
| 15 | 39812410 | Կահույքի փայլեցման միջոց | | | 1800 | 3600 | 5400 | 7200 | 9000 | 10800 | 12600 | 14400 | 16200 | 18000 | 18000 |
| 16 | 39221490 | Սպունգ սանիտարահ իգենիկ նշանակությա ն | | | 400 | 800 | 1200 | 1600 | 2000 | 2400 | 2800 | 3200 | 3600 | 4000 | 4000 |
| 17 | 39831242 | Լվացքի փոշի ձեռքով լվանալու համար | | | 1300 | 2600 | 3900 | 5200 | 6500 | 7800 | 9750 | 11700 | 13650 | 15600 | 15600 |
| 18 | 39514100 | Բամբակյա վաֆելանման խավոտ սրբիչներ | | | 4800 | 9600 | 14400 | 19200 | 24000 | 28800 | 33600 | 38400 | 43200 | 48000 | 48000 |
| 19 | 39831283 | Հատակ մաքրելու շոր | | | 8000 | 16000 | 24000 | 32000 | 40000 | 48000 | 56000 | 64000 | 72000 | 80000 | 80000 |
| 20 | 39812600 | Սպասք լվալու հեղուկ | | | 1720 | 3010 | 4730 | 6020 | 7310 | 9030 | 10320 | 11610 | 13330 | 14620 | 14620 |
| 21 | 33761300 | Թղթյա սրբիչներ | | | 1600 | 3200 | 4800 | 6400 | 8000 | 9600 | 11200 | 12800 | 14400 | 16000 | 16000 |
| 22 | 39221480 | Զուգարանի խոզանակ | | | 3600 | 3600 | 7200 | 7200 | 7200 | 10800 | 10800 | 10800 | 14400 | 14400 | 14400 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 23 | 39522330 | Մաքրող կտորներ | | | 600 | 1000 | 1500 | 1900 | 2300 | 2800 | 3200 | 3600 | 4100 | 4500 | 4500 |
| 24 | 39831281 | Ապակի մաքրող լաթ | | | 1350 | 2700 | 3600 | 4950 | 6300 | 7200 | 8100 | 9000 | 9900 | 11250 | 11250 |
| 25 | 39812600 | Ապակի մաքրող հեղուկ | | | 2000 | 4000 | 6000 | 8000 | 10000 | 12000 | 14000 | 16000 | 18000 | 20000 | 20000 |
| | | **Ընդամենը** | | | **117320** | **195510** | **291180** | **393670** | **480860** | **574030** | **666220** | **768910** | **863430** | **947070** | **947070** |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ
ք.Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/2/ 1
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
h/h 900252131025
ՀՎՀՀ 06954104

---------------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

Ա/Ձ Արարատ Դոխոյան
ք.Ստեփանավան, Վիրահայոց 80/11
«Արդշինբանկ» ՓԲԸ Ստեփանավանի մ/ճ
h/h2471403035270000
ՀՎՀՀ 67033518

---------------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 20» փետրվարի 2025 թ. կնքված
N ՀՀ-ԼՄՍՀ-ՄԱԱՊՁԲ-25/01 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
________________________________
________________________________
գտնվելու վայրը ______________
հհ ______________
հվհհ ______________

Պատվիրատու
________________________________
________________________________
գտնվելու վայրը ______________
հհ______________
հվհհ______________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
________________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց
________________________________
ստորագրություն
________________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց
________________________________
ստորագրություն
________________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*« 20» փետրվարի 2025 թ. կնքված*
*N ՀՀ-ԼՄՄՀ-ՄԱԱՊՁԲ-25/01 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N ______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ________________________
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ______________________ -ին կնքված N ________________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. __________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց** **Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________ ______________________
ազգանուն, անուն ազգանուն, անուն
______________________ ______________________
Ստորագրություն ստորագրություն